ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՈՆ ԻԼԻԵՍԿՈՒԻՆ

Նոյեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց պետական-պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուն:

Ողջունելով մեծարգո հյուրի այցը հայոց հավատքի կենտրոն, Ն. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց, որ հայ և ռումին բարեկամ ժողովուրդների դարավոր կապերը շարունակվում և ամրապնդվում են երկու երկրների նախագահների փոխայցելություններով: Վեհափառ Հայրապետը նշեց նաև, որ այդ բարեկամության ամրապնդմանը նախանձախնդիր է նաև Հայ Եկեղեցին: Այս առիթով Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Առաքելական և Ռումին Օրթոդոքս Եկեղեցիների միջև եղբայրական կապերին՝ ուրախությամբ հիշատակելով իր կաթողիկոսական ընտրության առաջին տարում այցելությունը Թեոկտիստ Պատրիարքին, ինչպես նաև այս տարի ռումին հոգևոր առաջնորդի մասնակցությունը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի սեպտեմբերյան գլխավոր հանդիսություններին:

Նորին Սրբությունը միաժամանակ իր երախտագիտությունը հայտնեց Ռումինիայի իշխանություններին՝ ռումինահայ համայնքի նկատմամբ տածած հոգատար ու ջերմ վերաբերմունքի համար: Վեհափառ Հայրապետը նշեց, որ ռումինահայության հանդեպ երկրի իշխանությունների գնահատանքի վկայություն է նկատում նաև Ռումինիա կատարած այցի ընթացքում նախագահի կողմից իրեն հանձնված բարձրագույն պարգևը՝ «Ռումինիայի աստղ» շքանշանը:

Պարոն Իլիեսկուն իր հերթին հավաստելով երկու ժողովուրդների բարեկամության մասին, նշեց, որ Ռումինիայում այս տարի հանդիսավորապես նշվել է ոչ միայն Հայ Եկեղեցու 1700-ամյա մեծ հոբելյանը, այլև Ռումինիայի հայոց թեմի 600-ամյակը:

«Այս բարեկամությունը խնդակցություն է ծնում Մեր հոգում, որովհետև հավատում ենք, որ միայն ժողովուրդների բարեկամությամբ ու եղբայրությամբ կարող ենք ապահովել խաղաղությունը 21-րդ դարի և նոր հազարամյակի»,- ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին Ռումինիայի նախագահը Վեհափառ Հայրապետի ուղեկցությամբ ծանոթացավ Վեհարանում պահվող հոգևոր գանձերին:

Ռումինիայի նախագահը եղավ Մայր Տաճարում, մոմեր վառեց երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Հայոց Հայրապետների շիրիմներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ